

**ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
2016թ. ՄԱՅԻՍԻ 23-ի ՆԻՍՏԻ N 4-05/16 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Արձանագրություն N 4-05/16**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի

2016 թ.-ի մայիսի 23-ի նիստի

Ներկա էին՝ Թորմաջյան Հ.Վ.(տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա. (կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ. դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ.դոցենտ), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Ծատրյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ.:

**Օ Ր Ա Կ Ա Ր Գ**

1. Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ամբիոններ ստեղծելու մասին.
2. «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կրեդիտային համակարգով ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի մասին.
3. «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից անդամների ընտրության ընթացակարգի մասին.

**Լսեցին** 1-Շուշիի տեխնոլոգիական համալսարանում ամբիոններ ստեղծելու համար առաջարկություն ներկայացրեց ռեկտորի պաշտոնակատար՝ Հ. Թորմաջյանը:

**Արտահայտվեցին**-Թ.Գրիգորյան, Ս.Գալստյան: Հավանություն տալով զեկուցողի առաջարկին, նշեցին, որ համալսարանի կազմում նպատակահարմար է ստեղծել «Բնագիտական առարկաների», «Հայոց լեզվի», «Օտար լեզուների» ամբիոններ:

**Որոշեցին** 1.1-Շուշիի տեխնոլոգիական համալսարանի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով ստեղծել «Բնագիտական առարկաների», «Հայոց լեզվի», «Օտար լեզուների» ամբիոններ:

1.2- Մինչև սահմանված կարգով համապատասխան թափուր տեղերի մրցույթների կազմակերպումը «Բնագիտական առարկաների» ամբիոնի վարիչի պարտականությունները հասարակական հիմունքներով հանձնարարել ավագ դասախոս՝ Ռոբերտ Միսակի Հարությունյանին, «Հայոց լեզվի» ամբիոնի վարիչի պարտականությունները՝ Բ.Գ.թ. դոցենտ՝ Լիանա Սմբատի Սանթրյանին, «Օտար լեզուների» ամբիոնի վարիչի պարտականությունները՝ դասախոս Արևիկ Կամոյի Հարությունյանին:

**Լսեցին 2-**«Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կրեդիտային համակարգով ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգի մասին ներկայացրեց ռեկտորի պաշտոնակատար՝ **Հ.Թոքմաջյանը**:

**Արտահայտվեցին-Ա.Գուլյան, Ս.Գալստյան, Ս.Շահնազարյան:** Հավանության արժանացնելով «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կրեդիտային համակարգով ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգն, առաջարկեցին հաստատել:

**Որոշեցին 2-**Հաստատել «Շուշիի տեխնոլոգիական համալսարանում կրեդիտային համակարգով ուսուցման գործընթացի կազմակերպման» կարգը:

**Լսեցին 3-**«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից անդամների ընտրության ընթացակարգի մասին ներկայացրեց ռեկտորի պաշտոնակատար՝ **Հ.Թոքմաջյանը**:

**Որոշեցին 3-**Հաստատել «Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդում համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմից անդամների ընտրության ընթացակարգը:

**Նախագահ՝** ստորագրություն **Հ.Վ.Թոքմաջյան**

**Քարտուղար՝** ստորագրություն **Ա.Ա.Առաքելյան**